

Գաղտնիության քաղաքականություն

Ինչպե՞ս ավելին, թե՛ ինչպես ենք մենք օգտագործում և պահպանում Ձեր անձնական տվյալները

Իննթեք ՍՊԸ-ն կարևորում է Ձեր գաղտնիությունը: Այդ իսկ պատճառով մենք հիմնել ենք «Գաղտնիության քաղաքականությունը»: Մենք ցանկանում ենք, որպեսզի Դուք վստահաբար տրամադրեք մեզ Ձեր անձնական տվյալները: Իննթեք ՍՊԸ-ն իրավունք ունի ցանկացած պահի վերանայել, փոփոխել, ավելացնել կամ հեռացնել «Գաղտնիության քաղաքականության» դրույթները: «Գաղտնիության քաղաքականության» մասին թարմացված ծանուցումը ստանալուց հետո, դուք ընդունում եք, որ կարդացել և հաստատել եք փոփոխված «Գաղտնիության քաղաքականությունը»:

Ինչպե՞ս է Իննթեք ՍՊԸ-ն տեղեկանում Ձեր անձնական տվյալների մասին

Իննթեք ՍՊԸ-ն Ձեր մասին տվյալներ է ստանում innotech.am կայքում Ձեր իսկ կողմից լրացված ձևանմուշի միջոցով: **Մենք Ձեր մասին տեղեկանում ենք նաև երբ գնում եք կայքը և օգտագործում Ծրագիրը: Տվյալներ հավաքագրելու համար մենք կիրառում ենք մի քանի ավտոմատացված միջոց, որոնք ակտիվանում են կայքից օգտվելիս և / կամ ծրագրաշարը օգտագործելիս:**

Ի՞նչ տեղեկատվություն է Իննթեք ՍՊԸ-ն ստանում

Անձնական տեղեկատվություն

Իննթեք ՍՊԸ-ն ստանում է ինֆորմացիա Ձեր անձնական տվյալների վերաբերյալ. անուն-ազգանուն, կազմակերպության անուն, իրավաբանական/գործունեության հասցե, հեռախոսահամարներ, էլ. հասցե:

Ոչ անձնական տեղեկատվություն

Իննթեք ՍՊԸ-ն Ձեր մասին ստանում է ոչ անձնական բնույթի տեղեկություն. Ձեր կողմից օգտագործվող բրաուզերի տեսակը, Ձեր գործավար (operating) համակարգը, Ձեր ISP- ն, Ձեր IP հասցեն, թե կայքի որ էջն եք ուսումնասիրում տվյալ պահին և որքան ժամանակ (տևողությունը): Կայքում գրանցվելու դեպքում, Իննթեք ՍՊԸ-ն ոչ-անձնական տեղեկությունները կապում է անձնական տվյալների հետ:

Կապ օգտատիրոջ հետ

Եթե դուք որևէ կերպ մեզ հետ կապ եք հաստատում, մենք կարող ենք այդ հաղորդակցությանը վերաբերող տեղեկություններ հավաքել ` անկախ դրա տեսակից (էլ. փոստ, ֆաքս, նամակ և այլն):

Սերվերի վերաբերյալ տեղեկություն

Եթե դուք օգտագործում եք մեր կողմից մշակված որևէ ծրագրային ապահովման պրոդուկտ, ինչպես օրինակ Web Hosting, Billing and Automation Solution, մենք դրա մասին որոշ ինֆորմացիա կստանանք. Այս տեղեկատվությունը ներառում է առանց սահմանափակումների. (ա) ծրագրաշարի արտոնագրված կամ չարտոնագրված կարգավիճակը. (բ) աղբյուրը, որից ստացվել է ծրագրաշարի համար լիցենզիա (այսինքն՝ AVROHOST կամ AVROHOST դուստր ձեռնարկություն). կամ (գ) սերվերի մասին տեղեկություններ, որոնց միջոցով տեղադրված է ծրագիրը, ներառյալ (i) հանրային IP հասցեն, (ii) գործավար համակարգը և (iii) այդ սերվերում ցանկացած վիրտուալացման տեխնոլոգիաների օգտագործումը: Այս տեղեկատվությունը ժամանակ առ ժամանակ կարող է ներառել նաև ծրագրային ապահովման առանձնահատկություններին վերաբերող տեղեկություններ, որոնք հետագայում կօգտագործվեն համակարգը բարելավելու նպատակով:

Ինչպե՞ս է Իննթեք ՄՊԸ-ն օգտագործում և պահում իր կողմից հավաքագրված տեղեկատվությունը

Ընդհանուր առմամբ, Իննթեք ՄՊԸ-ն Ձեր մասին տեղեկությունները կօգտագործի կայքը, ինչպես նաև իր կողմից մատուցված ծառայությունները բարելավելու նպատակով: Անձնական տվյալները կօգտագործվեն Ձեր անձնական էջը ստեղծելու և վավերացնելու համար, Ձեր կողմից պահանջվող գործարքները մշակելու, ինչպես նաև Ձեզ հետ կապ հաստատելու և տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար: Իննթեք ՄՊԸ-ն չի օգտագործի Ձեր անձնական տեղեկատվությունը որևէ ապրանք կամ ծառայություն վաճառելու նպատակով՝ քանի դեռ մենք ձեռք չենք բերել ձեր համաձայնությունը: «Կապը օգտատիրոջ հետ» բաժնի ինֆորմացիան կօգտագործվի այնպես, ինչպես անձնական տեղեկությունները: «Ոչ Անձնական տեղեկատվությունը» կօգտագործվի մեր կայքը, ծառայությունները բարելավելու համար:

Ձեր իրավունքները

Դուք իրավունք ունեք պահանջել, որպեսզի Ձեր անձնական և ոչ անձնական տվյալները չօգտագործվեն մարկետինգի նպատակով:

Հարցերի, մեկնաբանությունների կամ բողոքների դեպքում ...

Հարցերի, մեկնաբանությունների կամ բողոքների դեպքում զանգահարել կոնտակտային տվյալներում նշված համարներից ցանկացածին, կամ գրել info@inntech.am էլեկտրոնային հասցեին: